# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-1

ք.Երևան «12» « 12 » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Լեբրոն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ն. Ավետիսյանի (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 25.03.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5, 8.7 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ, հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ձեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 145000 հատ «ձու, 01 կարգ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 36730 հատ-ով, որի գումարը կազմում է՝ 1718964 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար ինը հարյուր վաթսունչորս) ՀՀ դրամ,

2) 10000 կգ «տավարի միս ոսկրոտ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 2110 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 4190460 (չորս միլիոն հարյուր իննսուն հազար չորս հարյուր վաթսուն) ՀՀ դրամ,

3) 10000 կգ «հավի ազդրամիս» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 2146 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1304768 (մեկ միլիոն երեք հարյուր չորս հազար յոթ հարյուր վաթսունութ) ՀՀ դրամ,

4) 30000 կգ «մսի պահածո» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 9731 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 14100219 (տասնչորս միլիոն հարյուր հազար երկու հարյուր տասնինը) ՀՀ դրամ,

5) 80000 լիտր «մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 21700 լիտր-ով, որի գումարը կազմում է՝ 5859000 (հինգ միլիոն ութ հարյուր հիսունինը հազար) ՀՀ դրամ,

6) 12500 կգ «կարագ» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 4770 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 11190420 (տասնմեկ միլիոն հարյուր իննսուն հազար չորս հարյուր քսան) ՀՀ դրամ,

7) 10000 կգ «պանիր, լոռի» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 1830 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 2734020 (երկու միլիոն յոթ հարյուր երեսունչորս հազար քսան) ՀՀ դրամ:

Հաշվի առնելով այն համգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «ձու, 01 կարգ», «տավարի միս ոսկրոտ», «հավի ազդրամիս», «մսի պահածո», «մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ», «կարագ» և «պանիր, լոռի» ապրանքատեսակների գնման պահանջն, ուստի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Կողմերը որոշեցին՝ Պայմանագրով նախատեսված մատակարարման վերջնաժամկետը երկարաձգել մինչև 2019թ.-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ:

1.3 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 100963149 (հարյուր միլիոն ինը հարյուր վաթսուներեք հազար հարյուր քառասունինը) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:
Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.4 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 1-ին, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ և 10-րդ չափաբաժինների աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.5 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաներ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ 0097,
Նորաշեն թղմ./Շ/27/72 բն.
ՎՏԲ Հայաստան բանկ
Հ/Հ 16062003796200
ՀՎՀՀ 01287026
Տնօրեն՝
Ն.Ավետիսյան

---------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1
« 12 » « 12 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 1 | 03142510/2 | ձու, 01 կարգ | ՀՀ | հատ | 46,8 | 5067036 | 108270 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ՝ համաձայն բաշխման ցուցակի | 108270 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 25.12.2019թ. |
| 3 | 15111110/2 | տավարի միս ոսկրոտ | ՀՀ, ՌԴ, ՈՒԿՐ, ԲԵԼ. | կգ | 1986 | 15669540 | 7890 | | 7890 | |
| 4 | 15112180/2 | հավի ազդրամիս | ՀՀ, ՌԴ, ՈՒԿՐ, ԲԵԼ, ԱՄՆ, Բրազիլիա | կգ | 608 | 4775232 | 7854 | | 7854 | |
| 5 | 15131631/2 | մսի պահածո | ՀՀ, ՌԴ, ՈՒԿՐ, ԲԵԼ. | կգ | 1449 | 29369781 | 20269 | | 20269 | |
| 7 | 15321000/2 | մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ | ՀՀ, ՌԴ, ՈՒԿՐ, ԲԵԼ. | լիտր | 270 | 15741000 | 58300 | | 58300 | |
| 9 | 15531100/2 | կարագ | ՀՀ, ՌԴ, ՈՒԿՐ, ԲԵԼ. | կգ | 2346 | 18134580 | 7730 | | 7730 | |
| 10 | 15541100/2 | պանիր, լոռի | ՀՀ | կգ | 1494 | 12205980 | 8170 | | 8170 | |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ 0097,
Նորաշեն թղմ./Շ/27/72 բն.
ՎՏԲ Հայաստան բանկ
Հ/Հ 16062003796200
ՀՎՀՀ 01287026

Տնօրեն՝
Ն.Ավետիսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 12 » « 12 » 2019 թ. կնքված
N 1 Համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 1 | 03142510/2 | ձու, 01 կարգ | - | 2035800 | 4071600 | 5067036 | 5067036 |
| 3 | 15111110/2 | տավարի միս ոսկրոտ | - | 5958000 | 11916000 | 15669540 | 15669540 |
| 4 | 15112180/2 | հավի ազդրամիս | - | 1824000 | 3648000 | 4775232 | 4775232 |
| 5 | 15131631/2 | մսի պահածո | - | 13041000 | 26082000 | 29369781 | 29369781 |
| 7 | 15321000/2 | մրգահյութ, պատրաստի օգտագործման բնական հյութ | - | 6480000 | 12960000 | 15741000 | 15741000 |
| 9 | 15531100/2 | կարագ | - | 8797500 | 17595000 | 18134580 | 18134580 |
| 10 | 15541100/2 | պանիր, լոռի | - | 4482000 | 8964000 | 12205980 | 12205980 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | 100963149 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63

ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ԼԵԲՐՈՆ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աջափնյակ 0097,
Նորաշեն թղմ./Շ/27/72 բն.
ՎՏԲ Հայաստան բանկ
Հ/Հ 16062003796200
ՀՎՀՀ 01267026

Տնօրեն՝
Ն.Ավետիսյան

---------------------------
/ստորագրություն/
Կ.Տ